


«A Kura-Araxes Center in Armenia Shengavit: Շենգավիթ» գրքի շնորհանդես

Մայիսի 24-ին Երևանի պետական համալսարանի գիտական նիստերի դահլիճում տեղի ունեցավ «A Kura-Araxes Center in Armenia Shengavit: Շենգավիթ» (Hakob Simonyan and Mitchell S Rothman, editors, With contributions by Gregory Areshian, Pam Crabtree, Jennifer Piro and Douglas Campana, Nyree Manoukian, Hans-Peter and Margartehe Uerpmann, Mikayel Gregoryan, Raffi Durgaryan, and Hayk Igythyan, Roman Hovsepyan, Eliso Kvavadze and Anahit Atoyants, Khatchetor Meliksetiyan and Ernest Pernicka, Dan Rahimi, and Hovhannes Sanamyan. – Costa Mesa, California, 2023) գրքի շնորհանդեսը: Նիստը վարում էր Երևանի պետական համալսարանի արվեստաբանության ֆակուլտետի դասախոս Վարդան Խաչատրյանը: Ելույթներ ունեցան. ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, ԵՊՀ հնագիտության ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ավետիսյանը, նույն ամբիոնի դասախոս, պգթ, դոցենտ Արտակ Գնունին, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պգթ Արսեն Բորոխյանը, Էրեբունի պատմահնագիտական թանգարանի տնօրեն, պգթ Միքայել Բադալյանը, հայ-ամերիկյան արշավախմբի թարգմանչուհի Արմենուհի Միմոնյանը: Շնորհանդեսին մասնակցում էր շուրջ 100 հայազետ հանրապետության տարբեր գիտական հաստատություններից:

Հայաստանի, և ընդհանրապես Հարավային Կովկասի առանցքային հուշարձաններից է վաղ բրոնզի դարի Շենգավիթ քաղաքատեղին: Դժվար է հիշատակել Հայաստանի հնագույն շրջանի հնագիտությանը, պատմությանը, ճարտարապետությանը, մշակույթին և արվեստին նվիրված որևէ աշխատություն, որտեղ հիշատակված չլինի Շենգավիթը: Հուշարձանի մասին հրատարակվել են բազմաթիվ հոդվածներ, մենագրությունների առաձին գլուխներ, Հայաստանի պատմության թանգարանում պահվող գտածոների կատալոգը, սակայն շուրջ մեկ հարյուրամյակ տևած ուսումնասիրությունների վերաբերյալ մինչ այժմ չի եղել ընդհանրացնող կոթողային հրատարակություն, ավելի հստակ՝ մինչ այս գրքի տպագրությունը մենք չենք ունեցել մենագրություն նվիրված այս կարևորագույն հուշարձանին: Եվ ընդհանրապես, վերջին տարիներին արևմտյան հեղինակավոր հրատարակություններում ավելի ու ավելի քիչ են հիշատակում այս կարևորագույն հուշարձանը: Այս բացը լրացնելու է գալիս Ամերիկայի միացյալ նահանգներում հրատարակված կոլեկտիվ մենագրությունը, որի գիտական խմբագիրներն են պատմական գիտությունների թեկնածու, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան ակադեմիկոս Հակոբ Միմոնյանը և ԱՄՆ-ի Վաշինգտոնի համալսարանի պատվավոր պրոֆեսոր Միտչել Ռոթմանը:

Գիրքն արդյունք է ավելի քան երկու տասնամյակ տևած պեղումների և ուսումնասիրությունների: Այս մենագրությունը հիմնարար մի աշխատություն է որը կոչված է բացահայտելու Հայաստանի հնագույն մշակույթների համար կարևորագույն շրջափուլերից մեկի՝ վաղ բրոնզի դարի շենգավիթյան կամ կուր-արաքսայան կոչվող մշակույթի առանցքային հուշարձաններից մեկի՝ Շենգավիթ քաղաքատեղիի գրեթե բոլոր առանձնահատկությունները՝ խեցեգործությունը, քարե և ոսկրե գործիքները, բրոնզի արտեֆակտները, մանր պլաստիկան, ոսկերչական արվեստը, զենքերը, զարդերը, քանդակը, պաշտամունքը, կենցաղը, թաղման ծեսը, ճարտարապետությունը, անասնապահությունը և երկրագործությունը: Աշխատության գլուխները գրել են ինչպես գիտական խմբագիրները, այնպես էլ մեր հանրապետությունում և արտերկրում մեծ հեղինակություն վայելող ԱՄՆ-ի, Կանադայի, Գերմանիայի, Վրաստանի մեկ տասնյակից ավելի գիտնականներ: Հրատարակված մենագրությունը նոր խոսք է հայագիտության բնագավառում և կարևոր նշանակություն ունի Հայաստանի հնագույն պատմության և մշակույթի բացահայտման և միջազգային մակարդակով ներկայացնելու համար: Կարծում են անհրաժեշտ է գործադրել բոլոր ջանքերը այս գիրքը նաև հայերեն հրատարակելու համար:



Կազմեց պ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Ավետիսյանը